ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/9006/02/22
Նախագահող դատավոր՝ Մ. Հարթենյան
Դատավորներ՝ Ս. Մատինյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ/9006/02/22**
2026թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԱՎԴ/9006/02/22 քաղաքացիական գործով 11.02.2026 թվականին կայացված որոշման վերաբերյալ

«11» փետրվարի, 2026թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 11.02.2026 թվականին գրավոր ընթացակարգով քննելով ըստ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի («ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի իրավահաջորդն է) (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Ալվարդ Ավագյանի, Աստղիկ և Կամո Կարապետյանների (այսուհետ՝ Համապատասխանողներ)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2025 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել՝ վերացնել Վերաքննիչ դատարանի 29.05.2025 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Վճռաբեկ դատարանի դատավոր Արսեն Մկրտչյանս, համաձայն լինելով 11.02.2026 թվականի որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական մասում առկա որոշակի եզրահանգումների, ինչպես նաև եզրափակիչ մասի հետ, այնուամենայնիվ գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանը պետք է ավելի խորը վերլուծության ենթարկեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, նկատի ունենալով որոշման առաջնորդող բնույթը և իրավակիրառ պրակտիկայի վրա լայն ազդեցությունը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ հատուկ կարծիքս Որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

1. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Հատուկ կարծիքը շարադրելիս հիմք են ընդունվել Որոշման մեջ ներկայացված՝ վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը:

2. Հատուկ կարծիքի հիմնավորումները.

Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով:

Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքը *(Lex retro non agit)* հիմնված է այն գաղափարի վրա, որ իրավական նորմերը պետք է ապահովեն կանխատեսելիություն և կայունություն՝ կապելով ժամանակի մեջ իրավական ակտերի գործողությունը քաղաքացիական շրջանառության մասնակիցների օրինական ակնկալիքներին: Այն համարվում է իրավունքի գերակայության (rule of law) հիմնարար տարր, որն ամրապնդում է իրավական համակարգի վստահելիությունը:

Սահմանադրական դատարանը, 29.11.2011 թվականի թիվ ՍԴՈ-1000 որոշմամբ անդրադառնալով իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու

իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:

15.01.2008 թվականի թիվ ՍԴՈ-723 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքի վերաբերյալ նշել է, որ «Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

(...)

Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքն իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ քաղաքացիական վեճերի դեպքում թեև սկզբունքորեն օրենսդրին թույլատրվում է հետադարձ ուժ նախատեսել գործող իրավակարգավորումներում, իրավունքի գերակայության սկզբունքը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատավարության իրավունքը բացառում են օրենսդրի ցանկացած միջամտություն արդարադատության իրականացման գործընթացին, որն ազդում է վեճի դատական լուծման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են հանրային կարևորության հիմնավոր պատճառներ *(տե՛ս Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 49, Dimopulos v. Turkey, no. 37766/05 գործով 02.04.2019 թվականի վճիռը, կետ 45, Hussein and Others v. Belgium, no. 45187/12 գործով 16.03.2021 թվականի վճիռը, կետ 60)*:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված վերը նշված իրավակարգավորման համաձայն՝ քաղաքացիական դատավարությունը, որպես կանոն, իրականացվում է գործի քննության կամ առանձին դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով, սակայն միևնույն ժամանակ Սահմանադրությամբ և օրենքով սահմանվել է օրենքի գործողության հետադարձության արգելք, և միայն բարելավող նորմերը կարող են հետադարձությամբ կիրառվել, եթե նման կիրառումը նախատեսված է օրենքով կամ տվյալ իրավական ակտով: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ դատավարական նորմերը կիրառվեն (դատավարությունն իրականացվի) դատավարական գործողության կատարման ժամանակ գործող օրենքով:

Սահմանադրական և օրենսդրական նման պահանջների պայմաններում հնարավոր են իրավիճակներ, որ հարուցված հայցերից հետո կատարվեն դատավարական օրենքի փոփոխություններ, որոնց նկատմամբ կիրառելի կլինեն թե՛ օրենքի հետադարձության արգելքը, թե՛ դատավարական օրենքն անմիջական կիրառելու սկզբունքը: Այս տեսանկյունից կարևոր է

տարանջատել, որ դատավարական օրենքն անմիջականորեն կիրառելու սկզբունքը բացարձակ չէ, քանի որ, եթե դատավարական փոփոխությունն իր էությամբ վերացնում է նյութական իրավունքի իրացվելիությունը կամ փաստացի դարձնում է իրավունքը ոչ կիրառելի, ապա այն նյութական հետևանք ունի, և դրա կիրառումը նախկին իրավահարաբերությունների նկատմամբ իր էությամբ հավասար է օրենքը թաքնված հետադարձությամբ կիրառելուն:

Եթե փոփոխող օրենքի անցումային դրույթները այլ բան չեն նախատեսում, ապա փոփոխված դատավարական նորմերը ավելի վաղ հարուցված հայցերով անմիջականորեն կիրառելիս Դատարանը կրում է պարտականություն՝ պարզելու.

- արդյո՞ք փոփոխված նորմը ազդում է միայն դատավարության ընթացակարգի (ձևի) վրա, թե փաստացի վերափոխում է նյութական իրավունքի իրացումը,

- արդյո՞ք նոր կարգավորումը արգելափակում է նախկինում ազատ կամ թույլատրված նյութական իրավունքի իրացումը:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ թեև նորմը ձևականորեն կարող է դատավարական լինել, սակայն, եթե դրա կիրառումը հանգեցնում է նյութական իրավունքի իրացման անհնարինության, ապա նշված նորմի կիրառումը ավելի վաղ հարուցված հայցերի նկատմամբ առաջացնում է օրենքը հետադարձությամբ կիրառելու արգելքի խախտում՝ այդպիսով խախտելով իրավական որոշակիության սկզբունքը և օրենսդրության նկատմամբ անձանց լեգիտիմ ակնկալիքները, բացառությամբ, երբ նորմը բարելավող է, և օրենքն ուղղակիորեն նախատեսում է այն հետադարձությամբ կիրառելու հնարավորություն:

Տվյալ դեպքում մինչև 14.03.2024 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավասու է եղել մերժելու վերաքննիչ բողոքի ընդունումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) վերաքննիչ բողոքը բերվել է վեճի առարկայի արժեքը նվազագույն աշխատավարձի **հինգապատիկը** չգերազանցող գույքային պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործով, և

2) բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.02.2024 թվականի ՀՕ-82-Ն օրենքը, նույն օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա տարածվելու անցումային կարգավորումներ չի պարունակում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի փոփոխությունը չի հանդիսանում դատավարական ընթացակարգային նորմ, միևնույն ժամանակ այն ներառում է ավելի վաղ հարուցված հայցերով 50.001-200.000 ՀՀ դրամի պահանջի իրավունք ունեցող անձանց նյութական իրավունքի իրացման (պաշտպանության) սահմանափակում, որը Սահմանադրության 73-րդ հոդվածի պահանջների համաձայն չի կարող

կիրառվել հետադարձությամբ, քանի որ այն անհամարժեքորեն սահմանափակում է անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը և խախտում է իրավական որոշակիության սկզբունքը:

Նշված պատճառաբանությամբ գտնում եմ, որ մինչև դատավարական նորմի փոփոխությունը հարուցված հայցերով կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության նկատմամբ կիրառելի չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի փոփոխությունը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատավարական օրենքն անմիջական կիրառելու սկզբունքը:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**